

Գէորգ ԲՇ. Մայր Եկեղեցւոյ Գումգաբոււի, 1858ին ուսուցիչ կը կարգուի Ս. Յակոբի ժառ. Վարժ.ի, կ'աշխատակցի Մկրտիչ Վրդ. Արժրունեանի Ստուար. Մրոյ Բաղաճին Երուսաղէմի զբքին (տե՛ս Յաւայքսանը):

Գէորգ ԲՇ. ՆՍՍՄԵԱՆ, Բեթղէմի.— (Սալէն) Ծ. 1827ին. աշկ. ժառ. Վարժ.ի, Զս. 1880ին, Մատակորար Ս. Յակոբի վանքին (1875-1890). կը վախճանի Բեթղէմի մէջ 1908ին, Գէորգ ք.ի Նասարեան կամ Ներսէսեան կոչուելուն պատճառը հետեւեալն է. 1623ին Գրիգոր Պարոնիսի պարք.ը Բեթղէմի մէջ հայ ժողովուրդը ունենալու անհրաժեշտութեան համար Մշնցի քրճազգեաց միաբան մը Ս. Յակոբի վանքէն Բեթղէմի զբրկելով՝ կը հրամայէ որ ամուսնանայ օրիորդի մը հետ, և կ'ունենայ Ներսէս անուամբ զաւակ մը. այս Ներսէսի սերունդէն է որ կը բազմանայ Բեթղէմի. Հայ բնակչութիւն մը Նասարեան կամ Ներսէսեան անունով. (Սիօն. 1875 էջ 62). Նասարեան Գէորգ ք.ն. կը պատկանի յիշեալ Ներսէսի սերունդին:

Գիւժ ԵՊՍ. ՄիխիթրէԱՅԵԱՆ, ՊՈՒՍԵՅԻ.— Մբ. Ծ. 1873ին: 1903ին, գեռ օրկ.՝ Կիլիկիոյ Սահակ կթղ.ին հետ Սիս կը մեկնի իբրև քարտուղար: Վարդապետանալէ յետոյ, 1915ին Սսոյ մէջ եպս. կը ձեռնադրուի և կը միաբանակցի Սսոյ վանքին: Ընդհ. Պատերազմի տարագրութեան ատեն, Գիւտ եպս. ինչպէս ուրիշ մի քանի Սսոյ միաբաններ՝ Սահակ կթղին. հետ, կ'ապաստանին Ս. Յակոբի վանքը: 1917ին, Սահակ կթղ. Երուսաղէմի միւս հոգևոր պետերուն և սինոդականներուն հետ, պետական որոշումով երբ Դամասկոս կը տարուի, իրեն փոխանորդ կը կարգէ Գիւտ եպս.ը՝ Դեոնդ Մագսուտեան և Դաւիթ Տէրտէրեան լրգ.ներուն հետ Ս. Յակոբի գործերը վարելու համար: Զինագաղարէն վերջ Գիւտ եպս. կը մեկնի Պոլիս 1920ին. կ'ընտրուի Առ. Տեղապահ Խարբերդի (1920-22). յետոյ կ'ուղևորի Ամերիկա՝ ուր կ'ըլլայ կարգաթող:

ԳՈՒԶԱԼ ԳԵՏԱՇԷՆՅԻ, (հայաբնակ մեծ գիւղ Գոնձակի մէջ) ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և ալլազգինեքէն կողոպտուած ձեռագիր Աւետարան մը կը գնէ և յիշատակ կուտայ Ս. Յարութեան Տաճարին ըստ այս յիշատակարանի (ՄՁ. Թ. 24). «Ես Գուգալ ապաշխարողս Գետաշէնյի եկի ի սբ. քաղաքն